

# Իրավունք

## Մշակույթ

Չկա Հասարակությանն  
առանց իրավունքի  
Ubi societas ibi jus

Երկշաբաթեր  
թիվ 5 (25)  
2008 թ. մարտի 30



### ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԳՀԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐ

60 տարի առաջ՝ 1948 թ. դեկտեմբերի 10-ին Փարիզի կոնսուլտացիոն Պակտի շնորհիվ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը ընդունեց **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը**։ Երբ կապակցությամբ 2008 թվականը ՄԱԿ-ի կողմից հայտարարվել է հռչակագրի ընդունման 60-ամյակի տարին։

Խորհրդային տարիներին այս միասնաբերող ընդհանուր հռչակագիրը, նույնիսկ իրավաբանական փակուղիների ուսանողների համար։ Ուստի, կրթ այն առաջին անգամ հայերեն տպագրվեց «Գրական թերթ»-ում, 1989 թ. ՄԱԿ-ի հիմնադրվելու, այն համեմատելով անգլերեն և ռուսերեն տարբերակների հետ, կատարեցին որոշակի խմբագրումներ։ Հռչակագրի կոչ տարբերակն այս տարիների ընթացքում հազարավոր տպագրվելով տպագրվել ու տարածվել է։ Քսենի որ Ազգային ժողովում ընդունված պաշտոնական տարբերակն ակնհայտորեն լավագույնը է, և հռչակագրի 60-ամյակի կապակցությամբ, մենք տպագրում ենք **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը** ՄԱԿ խմբագրումներով։

Ընդունվել է հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևով

#### Նախաբան

Նկատի առնելով, որ մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկասկածելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և հանրահասարակ խաղաղության հիմք է, և նկատի առնելով, որ մարդու իրավունքների անտեսումն ու արհամարհումը հանգեցրել են բարբարոսական, մարդկային խիղճը վրդովող գործողությունների, և որ իբրև մարդկության վեհ նպատակ է հռչակված այնպիսի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կունենան խոսքի ու հանձնառուների ազատություն և զերե կլինեն վախից ու կարիքից, և

նկատի առնելով, որ անհրաժեշտ է որպեսզի մարդու իրավունքները պաշտպանվեն օրենքի ուժով՝ նպատակ ունենալով ապահովել, որ մարդը հարկադրված չլինի դիմել բռնության ու ճնշման դեմ ուղղված ապստամբության՝ որպես վերջին միջոցի, և

նկատի առնելով, որ անհրաժեշտ է նպատակ ազգերի միջև բարեկամական հարաբերությունների գարգացմանը, և

նկատի առնելով, որ Միավորված ազգերը ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավասար մարդու հիմնական իրավունքների, մարդկային անհատի պատվի, արժանապատվության և տղամարդու ու կնոջ իրավահավասարության նկատմամբ և որոշել են սոցիալական առաջընթացի ու կենսապայմանների բարելավմանն աջակցել առավել ազատության պայմաններում, և

նկատի առնելով, որ անգամ երկրները պարտավորվել են, Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցությամբ, նպատակ մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների համընդհանուր հարգմանն ու պահպանմանը, և

նկատի առնելով, որ այդ իրավունքների ու ազատությունների բնույթի համընդհանուր ըմբռնումը վիթխարի նշանակություն ունի այս պարտավորության լիակատար իրականացման համար,

#### Ուստի, յաժմ

Գլխավոր վեհաժողովը հռչակում է մարդու իրավունքների սույն համընդհանուր հռչակագիրը՝ որպես մի խոսքի, որի իրագործմանը պիտի ձգտեն բոլոր ժողովուրդներն ու պետությունները այն առունով, որ յուրաքանչյուր մարդ ու հասարակության անեն մի մարմին, մշտապես

նկատի ունենալով սույն Հռչակագիրը, ձգտեն լուսավորության ու կրթության միջոցով նպաստել այդ իրավունքների ու ազատությունների հարգմանը և, ազգային ու միջազգային առաջընթացի միջոցառումների անցկացմամբ, դրանց համընդհանուր և արդյունավետ ծանաչման ու իրականացման ապահովմանը ինչպես Կազմակերպության անդամ երկրների, այնպես էլ նրանց իրավասության տակ գտնվող տարածքներում ապրող ժողովուրդների միջև։

#### ՀՈՒՂԱԾ 1

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությանը և իրավունքներով։ Նրանք ժողոված են բանակամոքությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով։

#### ՀՈՒՂԱԾ 2

Յուրաքանչյուր ոք պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատությունները առանց որևէ տարբերակման՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից։

Բացի այդ, չպետք է դրվի որևէ տարբերություն, թե ինչպիսին է տվյալ երկրի կամ տարածքի, որին պատկանում է մարդը, քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակը՝ անկախ այն բանից, թե այդ տարածքը անկախ է, խնամարկյալ ոչ ինքնավար, թե որևէ ձևով սահմանափակ է իր ինքնավարության մեջ։

#### ՀՈՒՂԱԾ 3

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք։

#### ՀՈՒՂԱԾ 4

Ոչ ոք չպետք է մեղադրվի կամ անազատ վիճակում, ստրկությունը և ստրկավաճառությունը՝ իրենց բոլոր տարատեսակներով, արգելվում են։

#### ՀՈՒՂԱԾ 5

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսնձցնող վերաբերմունքի ու պատժի։

#### ՀՈՒՂԱԾ 6

Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ նա գտնվի լի-նի, իր իրավասությունները ծանաչման իրավունք ունի։

#### ՀՈՒՂԱԾ 7

Օրենքի առջև բոլոր մարդիկ հավասար են և, առանց որևէ խտրության, ունեն օրենքով հավասարապես պաշտպանվելու իրավունք։ Բոլոր մարդիկ ունեն սույն Հռչակագրով հաստատված հավասարությունը խախտող որևէ խտրականությունից և նման խտրականության ստորաբերք պաշտպանվելու հավասար իրավունք։

→ էջ 4

### ՉԱՅՆ ՄԵԾԱՑ



Էլեանոր Ռուվալես

«Իրականում մենք չենք կարող խաղաղություն ունենալ կամ այնպիսի միջոցով ստեղծել, որտեղ իշխի խաղաղությունը, բանի դեռ չենք ծանաչել առանձին մարդկանց իրավունքները, նրանց պատիվն ու արժանապատվությունը... և համաձայնել, որ դա այն ամենակարևոր բանն է, որ պետք է ընդունվի ամբողջ աշխարհում»:

### ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում \_\_\_\_\_ էջ 2
- Կարեն Ասատրյանի հիշատակին. ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա \_\_\_\_\_ էջ 3
- Մարդու իրավունքներ, բարոյականություն և ավանդական արժեքներ \_\_\_\_\_ էջ 4
- Առօրյա կիրառելի օրենքներ \_\_\_\_\_ էջ 5
- Աշխարհի մեծագույն դասը՝ 2008 թ. ապրիլի 23-ին \_\_\_\_\_ էջ 5
- Վրեժ Առաքելյան. «Դիմակայություն» վերելքից առաջ \_\_\_\_\_ էջ 6
- Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյան. «Բարության լույսը մեր սրտերից տանենք մեր մտքերը» \_\_\_\_\_ էջ 7
- Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ \_\_\_\_\_ էջ 8



# Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

## ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԳԻ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՍՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՌՈՐՅԱ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ

2008 թ. մարտի 15-ից եռօրյա այցով Հայաստանում էր Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) պատվիրակությունը:



COUNCIL OF EUROPE COMITE DES EUROPEENS

Այցի հիմնական նպատակն էր ուսումնասիրել Հայաստանում նախագահական ընտրություններին հարողաժ իրադարձությունների առնչությամբ ձեռքարկված անձանց նկատմամբ վերաբերմունքը: Պատվիրակությունը գրույցներ ունեցավ Լուրբարաշենի, Վարդաշենի և Երևան-Կենտրոն կայանակայաններում, Ազգային անվտանգության ծառայության ժամանակավոր կայանակայանում և Երևան քաղաքի ոստիկանական վարչությունում ձեռքարկված մոտ ութսուն անձանց հետ: Պատվիրակությունը նաև այցելեց կազմակերպված հանրակրթության դեմ պայքարի հիմնական բաժանմունք և Կենտրոն համայնքի ոստիկանության վարչությունը:

Այցի ընթացքում ԽԿԿ պատվիրակությունը ընձարկում էր ունեցավ 73 արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանի, ոստիկանության պետի առաջին տեղակալ Արարատ Մահտեսյանի, գլխավոր դատախազի տեղակալ Արամ Թամազյանի, դատական բժշկագիտության հանրապետական կենտրոնի տնօրեն Շուռա Վարդանյանի և մարդու իրավունքների պաշտպան Արմեն Զարոբյանյանի հետ: Պատվիրակությունը նաև հանդիպեց հասարակական կազմակերպությունների և փաստաբանների հետ:

## ՄԱՐԿՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՑ

Մարտի 25 - Ստրասբուրգի գահերի հիշատակի միջազգային օր  
Վարդի 4 - Ալանների մասին իրազեկության և ակախազերծման գործընթացի օժանդակության միջազգային օր  
Վարդի 7 - Անողջապահության միջազգային օր

Այցի ավարտին ԽԿԿ պատվիրակությունը Հայաստանի իշխանություններին ներկայացրեց իր նախնական դիտարկումների արդյունքները:  
Պատվիրակության կազմում էին ԽԿԿ անդամներ պատվիրակության ղեկավար Մարկ Նյլեն (Քելզհա), Իվան Ջանկովիչ (Սերբիա) և Գեորգի Թուզուչին (Վրաստան):

## ԱՍԻԱ

### Իրաքը հինգ տարի անց

2003 թ. մարտի 19-ին ԱՄՆ զինված ուժերի հարձակումից հինգ տարի անց Իրաքում իրավիճակը դեռևս անհանգիստ է. մարդու իրավունքների վիճակն աղետալի է, քայքայված է երկրի տնտեսությունը և փախստականների թիվը գնալով աճում է:



Ստրասբուրգի գահերի հիշատակի միջազգային օր

Ըստ «Միջազգային համաձայնության» կազմակերպության «Կոտորած և հուսահատություն. Իրաքը հինգ տարի անց» վերնագրված ռոթ զեկույցի Իրաքն աշխարհի ամենափրկված վերջին երկրներից մեկն է, ուր, չնայած ԱՄՆ և Իրաքի անվտանգության ուժերի առկայությանը, ամեն ամիս սպանվում են Իրաքի հայրուհիները քաղաքացիներ: Համաձայն 2008 թ. հունվարին Առողջապահության համաշխարհային կազմակերպության և Իրաքի առողջապահության նախարարության կողմից կատարված հետազոտության 2003 թ. մարտից 2006 թ. հունիսն ընկած ժամանակահատվածում 151.000 մարդ է սպանվել:

2006 թ. սկսած՝ բռնություններն ավելի հաճախ կրոնական դրդապատճառներ ունեն: Սունիների ու շիաների զինված խմբերը հարձակվում են միմյանց վրա, բռնի տեղահանումներ կատարում: Ավելի քան չորս միլիոն մարդ է տեղահանվել, որոնցից երկու միլիոնն այժմ փախստականներ են Սիրիայում և Գերմանիայում:

Մահապատի մասին օրենքը կրկին ուժի մեջ է մտցվել, և հարյուրավոր մարդիկ դատապարտվել են մահապատի: 2007 թ. առմված 33 մարդու նկատմամբ մահապատիժի կ կատար է ածվել, որոնցից շատերն անարդար դատավարությունների:

Կանաչ հարկարկված են իսլամական հագուստ կրել, ցրանց առևանգում, բռնաբռնում, սպանում են:

Տնտեսական պայմանները ծայրահեղ վատ են, քաղաքացիների մեծ մասը տառապում է սննդի, կացարանի, խմելու ջրի, առողջապահության, կրթության և աշխատանքի անբավարար հնարավորություններից:

2004 թ. հունիսի 4-ին ԱՄԿ-ի անվտանգության խորհուրդն ընդունել է թիվ 1546 որոշումը, ըստ որի՝ Իրաքից օտար զորքերը պետք է հեռանալին մինչև 2004 թ. հունիսի 30-ը:

2004 թ. հունիսին գործադիր իշխանությունը համձն վեց Իրաքի կառավարությանը, սակայն վերջինիս մինչ օրս չի հաջողվել վերջ դնել բռնություններին և երկրում կայուն խաղաղություն հաստատել:

«Միջազգային համաձայնության» կազմակերպության մամուլ հաղորդագրություն

### Ինքնությունը հաստատող վկայական՝ ոստիկանության չարաշահումների դեմ

«Միջազգային համաձայնության» կազմակերպության անդամները վերջերս ցույց էին կազմակերպել Լոնդոնում՝ Վրաստանի դեսպանատան առջև՝ պահանջելով Վրաստանի իշխանություններին վերջ տալ ոստիկանության չարաշահումներին ու անպատեխությանը և պատրաստել ինքնությունը հաստատող վկայական ոստիկանու-

թյան աշխատակիցների համար, ինչը կզսպի նրանց կողմից խոչնակումների կիրառումն ու անմարդկային վերաբերմունքը քաղաքացիների նկատմամբ:



Այս գործողությունն արձագանք էր 2007 թ. նոյեմբերի 7-ին Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունների, երբ ոստիկանությունը մեղադրվեց նախագահ Միխայիլ Սահակաշվիլու հրաժարականը պահանջող ցուցարարներին ցրելու նպատակով ուժ գործադրելու մեջ, որի հետևանքով, ըստ պաշտոնական վիճակագրության, ավելի քան 550 ցուցարարներ և 34 ոստիկաններ հոսպիտալացվել էին:

### ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության (ՅՏԿ) 61-րդ ամենամյա համաժողովը

«Վերահաստատելով Մարդու իրավունքները. Հանրային տեղեկատվության 60 տարեկան էջ խորագրով 2008 թ. սեպտեմբերի 3-5-ը Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՈ) կենտրոնական գրասենյակում տեղի կունենա ՄԱԿ-ի ՅՏԿ-ի հերթական՝ 61-րդ ամենամյա համաժողովը:

Բացի ՄԱԿ-ի ՅՏԿ-ի գործադիր հանձնաժողովից՝ համաժողովի կազմակերպչական աշխատանքներում ընդգրկված են Ֆրանսիայի կառավարությունը՝ ի դեմս Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության, ՅՈՒՆԵՍԿՈ-ն, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը և ՄԱԿ-ի տարածաշրջանի տեղեկատվական կենտրոնը Ռյուսելեում: Հրավիրված են նաև փարիզյան և ժնևյան ոչ կառավարական կազմակերպություններ:

### Ստրկությունը որևէ արդարացում չունի՝ Լուիզ Արբորի կոչն ընդդեմ ստրկության ժամանակակից ձևերի

Ցավոք, ստրկությունը պատճառաբանված վերացվելուց երկու դար անց էլ դեռևս պահպանվում են ստրկության ժամանակակից ձևերն, ու հազարավոր մարդիկ ենթարկվում են ստրկական շահագործման:



Աշխարհի յուրաքանչյուր երկրում կան կանաչ ու երեխաներ, որոնց խաբել կամ ստրկության դատապարտել նրանց: Հասկանալի խոցելի են նրանք, ում վաճառել և տեղափոխել են այլ երկիր, ենթարկել ֆիզիկական խոշտանգումների, վաճառել և վերականգնել, բռնազրկվել անձնագրերի և մյուս փաստաթղթերի, որի հետևանքով նրանք հայտնվել են գիտնականի ծուրկում:

21-րդ դարում ստրկությունը չի կարող ունենալ ոչ տնտեսական, ոչ մշակութային և ոչ էլ պատմական արդարացում: Այս բարբարոսական արարքների դեմ պայքարում:

րում անհրաժեշտ է հարթախարտ այլ բազմաթիվ գործոններ, որոնք հինգ են ծառայում ստրկության ժամանակակից ձևերի գոյության համար, այդ թվում՝ աղքատություն, անգրագիտություն, խտրականություն, անպատեխություն, կաշառակերություն, սոցիալական բևեռացում և սեռային խտրականություն:

2001 թ. Հարավային Աֆրիկայի Գուրբան քաղաքում ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և անհանդուրժողականության թեմայով կայացած համաշխարհային վեհաժողովում կրկին հայտարարվեց, որ ստրկությունը և ստրկավաճառությունը մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են:

Դժբախտաբար, անտեսելով մեր աչքերի առջև կատարվող հարկադիր մարմնավաճառությունը ու լքողությունը, մենք դեռևս չենք գիտակցում ամեն օր, յուրաքանչյուր մայրցամաքում շարունակաբար կատարվող հանցավորության սպառնալից մեծությունն ու լքողությունը:

Ես կոչ եմ անում բոլոր կառավարություններին ձեռնարկել միջոցներ երաշխավորելու, որ ոչ մի տղամարդ, կին կամ երեխա ոչ մի դեպքում մարդավաճառության զոհ չդառնա:

Ըստ 2007 թ. դեկտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի թիվ 62/122 որոշման՝ ստրկության և անդրատնայան ստրկավաճառության գահերի հիշատակի միջազգային օրը կնշվի ամեն տարի մարտի 25-ին:

ՄԱԿ-ի մամուլ հաղորդագրություն

### Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերաբերյալ առաջին զեկույցը

Մարտի 25-ին Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի պատմում կայացած հանդիսավոր արարողության ընթացքում Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ներկայացրեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավճիռների կատարման վերահսկման վերաբերյալ իր առաջին զեկույցը, որը պաշտոնապես հանձնվեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ ժան Փոլ Կոստային, գլխավոր քարտուղար Թերի Դևիսին, Մարդու իրավունքների հանձնակատարին և հորիորդարանական վեհաժողովին:

Ժան Փոլ Կոստան երախտագիտություն հայտնեց նախարարների կոմիտեին՝ վերջին տարիների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանությունը խթանելու և բարելավելու ուղղությամբ կատարած աշխատանքի համար շեշտելով կոմիտեի կարևոր դերակատարումն այս ոլորտում: Թերի Դևիսի խոսքերով դատարանի վճիռների կայացումը շատ կարևոր է, սակայն պակաս կարևոր չէ դրանց կատարումը, որն էական նշանակություն ունի տվյալ գործի մասնակիցների համար:

Խորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղար Մաթեո Սորինոն ասաց, որ խորհրդարանների և հորիորդարանական վեհաժողովի ու նախարարների կոմիտեի, ՄԻ և Եվրոպական դատարանի, Մարդու իրավունքների հանձնակատարի համագործակցության համար այս զեկույցը արժեքավոր միջոց կլինի Եվրոպայի քաղաքացիների իրավունքների արդյունավետ պաշտպանության գործընթացում:

Ձեկույցում ընդգրկված են 2007 թ. ուսումնասիրված գործեր ու վիճակագրական վերլուծություններ, վերջնական և ժամանակավոր վճիռներ, ինչպես նաև հուշագրեր ու հրապարակային այլ կարևոր փաստաթղթեր:

# Մենք՝ քաղաքացիական Հանարակույթյունը



ՄԱԿ-ի ՀԱՅՔԿԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ

Armenian UN Association

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է՝ հանդես գալ որպես կամուրջ՝ մի կողմից նպաստելով Հայաստանում ՄԱԿ-ի արժեքների, սկզբունքների և ծրագրերի տարածմանը, մյուս կողմից՝ հայկական արժեքների, ավանդույթների և մշակութային ժառանգության տարածմանը ՄԱԿ-ի կառույցների և ծրագրերի միջոցով ամբողջ աշխարհում՝ հարստացնելով նաև համաշխարհային մշակույթը:

Հիմնադրվել է՝ 2005 թ. հունվարի 15-ին: Հիմնադիր և պատվավոր նախագահ՝ Կարեն Ասատրյան:

ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԻՒՐՆԵՐՆ ԵՆ՝

- ակտիվորեն տարածել ՄԱԿ-ի սկզբունքները և գործունեությունը
- աջակցել ՄԱԿ-ի և նրա մասնագիտացված գործակալությունների վերաբերյալ տեղեկության և գիտելիքների տարածմանը
- մասնակցել քաղաքացիական հասարակության ժողովրդավարական գործընթացների կազմակերպմանը և զարգացմանը
- տարածել խաղաղաշինության և ոչ բռնության գաղափարները
- գործել իբրև Մարդու իրավունքների ակտիվ պաշտպան և բարոգր
- աստարել խաղաղությանը և համագործակցությանը, մասնակցել համընդհանուր խնդիրների լուծման գործընթացին
- հանուն համագործակցության և միասնության գաղափարների իրագործման ակտիվորեն համագործակցել տեղական, արտասահմանյան և միջազգային ՉԿ-ների և հաստատությունների հետ, որոնք զբաղվում են համընդհանուր խաղաղության և աշխարհի կայուն զարգացման խնդիրներով, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանությամբ
- մասնակցել ՉԿ-ների զարգացման գործընթացին:

Հասցեն՝

ՀՀ ք. Երևան



Իսրայելյան փ., 39/17

Հեռ.՝ (10) 53-80-53  
 Հեռ./հեռապատճեն՝ (10) 53-80-86  
 Էլ. փոստ՝ auna@arminco.am  
 Կայքէջ՝ www.auna.com

ՄԱԿ-ի հայկական ասոցիացիան համախմբում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և կազմակերպություններին Միավորված ազգերի կազմակերպության արժեքների, գաղափարների և սկզբունքների շուրջ:

### ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ՄԱԿ-ի Ասոցիացիաների համաշխարհային Ֆեդերացիայի անդամ
- Փախստականների և ներքին տեղահանված անձանց գործերով ՉԿ-ների համագործակցության կովկասյան ցանցի անդամ
- Մարդկային ռեսուրսներ ղեկավարող ՉԿ-ների համագործակցության ցանցի անդամ
- ՄԱԿ-ի Ասոցիացիաների համագործակցության կովկասյան ցանցի անդամ
- ՄԱԿ-ի Հարդրակազմության խմբի անդամ

### ԳՐՈՐԾՆԵՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԱԿ-ի տեղեկատվական կենտրոններ»  
 2006 թ. դեկտեմբերի 20-ին կնքվեց Եռակողմ համաձայնության հուշագիր, որը եզակի փաստաթուղթ է երեք կառույցների միջև՝ պետության՝ ի դեմս ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, մի-

ջազգային կազմակերպության՝ ի դեմս ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության, և հասարակական կազմակերպության՝ ի դեմս ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի՝ նպատակ ունենալով ակտիվացնել մարզային երիտասարդությանը:

Մարզերի երիտասարդական կենտրոններին կից ստեղծվեցին ՄԱԿ-ի տեղեկատվական կենտրոններ, որտեղ պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ, դասընթացներ, տարբեր միջոցառումներ: Կենտրոններում գործում են գրադարաններ, որոնք ժամանակ առ ժամանակ համալրվում են նոր գրքերով:

«Հայկական հանրապետական ՄԱԿ-ի մոդել» առաջին խորհրդաժողովը ՄԱԿ-ի հայկական ասոցիացիան մեծ կարևորություն է տալիս երիտասարդական ծրագրերին, որոնցից հատկանշական է «ՄԱԿ-ի մոդել» խորհրդաժողովների կազմակերպումը:

2005-2007 թթ. ընթացքում մարզերում և Երևանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում կազմակերպված «ՄԱԿ-ի մոդել» շաբթյան հասավ իր գագաթնամասն հաջող փուլին:

2007 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների օրը, ՄԱԿ-ի հայկական ասոցիացիան նախաձեռնեց «Հանրապետական ՄԱԿ-ի մոդել» առաջին խորհրդաժողովի կազմակերպումը, որին մասնակցեց 18-30 տարեկան շուրջ 60 երիտասարդ համընդհանուր տարբեր մարզերից և մայրաքաղաքից:

Խորհրդաժողովը ընթացքում առաջին անգամ նմանակեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը: Օրակարգում ընդարձակապես անարկան մտախառնի հիմնահարցն էր:

Ոե՞ն, ՄԱԿ-ի հայկական ասոցիացիան բավական երիտասարդ կառույց է, և բոլորովին վերջուս լրացավ կազմակերպության 3 տարին, այնուամենայնիվ այն հասցրել է իր արժանի տեղն ու դիրքը զբաղեցնել հասարակական ոլորտում՝ նպաստելով քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու զարգացմանը:

Այս կարճ ժամանակահատվածում կազմակերպությունը իրականացրել է 40-ից ավելի ծրագրեր տեղական, ազգային և տարածաշրջանային մակարդակներում՝ ներառելով հազարավոր երիտասարդների: Մեծ է ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի ներդրումը ՄԱԿ-ի սկզբունքների, արժեքների և ծրագրերի տարածմանը նպաստելու, Հազարամյակի զարգացման նպատակների իրագրության բարձրացման, փախստականների հիմնախնդիրների լուծման, աշխատանքային միջավայրի, մարդկային ռեսուրսների զարգացման, տարածաշրջանում հասարակության կարգավորման և խաղաղության մշակույթի տարածմանն ու քաղաքացիական հասարակության մասնակցության ակտիվացման գործում:



ՄԱԿ-ի հայկական ասոցիացիան իրականացրել է նաև մի շարք միջազգային ծրագրեր և շարունակելու է ընդլայնել համագործակցության շրջանակը միջազգային ապարտեզում:

տարյալ հայր, կազմակերպության օրինակելի դեմավար և պարզապես լավ ընկեր, սահայն խոսքերը, որոնցով կարող եմք բնութագրել նրան: Սակայն ինչ էլ ասեմք, աղբյուրի բառավորաբան է նրա մարդկային արժեքի հանձնար:

Մշտապես անկեղծ, բարի, սեփանհոգի... Ուստի մենք՝ ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի աշխատակիցներս, անդամներս և կամավորներս, որքան էլ դժվար լինի, պարտավոր եմք առաջնորդվել նրա բարի ու վեժ ավանդույթներով ու կարգախոսով՝ «Դուք կարող եք»:

Երբեմնի պարզ ու հասարակ այս բառերն այսօր մոգական ուժ են ստացել՝ օգնելով առջ շարժվել. նրա անավարտ գործն ու երազները երբեք պիտի իրականություն դարձնեք: Մենք այլընտրանք չունենք: «Մենք կարող եմք, մենք պարտավոր եմք կարողանալ»...

Եզակի անձնավորություն, ընտանիքի կա-

ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա

## Դուք Կարող եք...



Հրաժեշտ...

Բառն ակամա յուրաքանչյուրիս մեջ արքանացնում է անսահման կարող, որի գիտակցումից էլ ծնվում է տառապանքը, հետո նորից լուրջություն. սկսում են վերհիշել և մարմնով, հոգով ու մտքով սարսափ, քանցի ուժերից վեր է հրաժեշտի հետ հաշտվելը:

Մարդիկ ծնվում են և մահանում. օրինակափություն է: Մտնում են՝ մեկը ծնվում է ոսկու մեջ լողալու համար, մյուսը՝ որը կյանքում աշխատելու:

Կարեն Ասատրյան անհատոր ծնվել էր անդարտում աշխատելու, արժանուր համար՝ հանուն հասարակության բարօրության՝ անձնա-

ցորը նվիրվելով իր գործին և կրիվ տալով ճանապարհին գոյացող ցանկացած դժվարության ու խոչընդոտի հետ:

Նրա աչքերում միշտ կյանքի կարոտ կար: Արժեքներում էր յուրաքանչյուր վայրկյանը՝ այն օգտագործելով նոր գործ ձեռնարկելու համար: Ըստ էր շտապում...

Աշխատանքում խստապահանջ էր. միևնույն ժամանակ չափազանց վստահում էր յուրաքանչյուրիս կարողություններին: Միշտ մեր կողքին էր իր կարևոր խորհուրդներով:

Ժամանակ առ ժամանակ, երբ մեզանից մեկն ինչ-որ դժվարության էր հանդիպում, նա ասում էր պարզ, բայց հուսադրող բառեր՝ «Դու կարող ես»: Եվ մենք իսկապես հաղթահարում էինք ցանկացած դժվարություն: Մեծ էր Կարենի ներշնչանքի ուժը:

Նա ջերմ էր ու անմիջական, բարի ու անմաքորը նվիրված իր ընտանիքին ու աշխատանքին: Նրա կյանքը լի էր բազում բարեգործություններով ու հանդուրժողականությամբ:

Որքան էինք սիրում նրա պատմությունները՝ մեկը մյուսից հետաքրքիր ու զավեշտալի: Նրա անսահման մարդասիրությունն ու չնարող բարին կարծես մագնիսի պես դեպի իրեն էր ձգում բոլորին՝ անկախ տարիքից, մասնագիտությունից ու մտանքակերպից:

Նրա կրուտսը ծանր է ու անողորմ, քանի որ նրա ջերմությունն ու հոգսատվությունը զգացել ենք, զգում ենք ու կզգանք բոլորս:

Նրա կյանքում ամեն ինչ անկեղծ էր ու միշտ: Լինելով ընդամենը 40 տարեկան՝ Կարեն Ասատրյան հասարակական գործիչը հասցրեց կրթել, զինել գիտելիքներով և, անենակարևորը, իր շրջապատի մարդկանց մեջ

զարգացրեց մի կարևոր արժանիք՝ հարգել պետությունն ու լինել իսկական քաղաքացի: Այս ամենը նրան հաջողվեց ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս՝ տարածաշրջանային մակարդակում, և դեռ ինչքան անելիք ու ասելիք ունեւ միջազգային ապարտեզում...

Նույնիսկ կյանքի վերջին օրերին, գտնվելով բժշկների խիստ հակողության ներքո, պայքարելով կյանքի համար, չէր համձնվում: Ամեն օր հեռախոսազանգերով իր ցուցումներն էր տալիս բուրդիս՝ առավել ոգեշնչելով իր կարգախոսով՝ «Դուք կարող եք»:

Մարտի 10-ին հիվանդանոցում նշեցին կազմակերպության 3-ամյակը:

Իսկ մարտի 14-ին հիվանդանոցային բուրդիս հավաքեց իր շուրջը: Ժողով էր հրավիրել: Ե՛րբ հանդիպեց իր լինում, բայց... հասցրեց սաել ամեն ինչ, հանձնարարել յուրաքանչյուրիս իր անելիքն ու...

«Միշտ անժամանակ է այն մարդկանց մահը, ովքեր անսահ գործեր են կատարում»:

Եզակի անձնավորություն, ընտանիքի կա-

### Ուշադրություն

Կարեն Ասատրյանի ընտանիքին աջակցություն ցուցաբերելու նպատակով մի շարք ՀՀ-ներ բացել են բանկային հաշվեհամար՝ կատարելով միանվագ 100.000-ական դրամ փոխանցումներ: Փոխանցումները կշարունակվեն նաև ամսական 60.000-ական դրամի պահով:

Կարեն Ասատրյանի մտերիմներին, ընկերներին և ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի համագործակից կազմակերպություններին կոչ ենք անում միանալ նախաձեռնությանը:

Փոխանցումները կարելի է կատարել հետևյալ բանկային հաշվեհամարին.

ԱԿԲ-ԿՐԵԴԻՏ ԱՐԿԻՎՆ ԲԱՆԿ	
Քարտային հաշվի համար՝	220000836290000
Ստացող՝	Արմինե Պողոսյան

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

2008 թ. փետրվարի 5-6-ը Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր կենտրոն Սբ. Էջմիածնում Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական եկեղեցիների միջև երկխոսության շրջանակներում կայացավ 2-րդ համընդհանուր Այն նվիրված էր «Մարդու իրավունքները, բարոյականությունը և ավանդական արժեքները» թեմային:



Երկխոսությունը սկսվեց 2001 թ. երկու եկեղեցիների առաջնորդների՝ Մոսկվայի և համայն Ռուսիո սրբազան հայրապետ Ալեքսի 2-րդի և Ամենայն հայր կաթողիկոս Վարդգես 2-րդի նախաձեռնությամբ և օրհնությամբ՝ աստ-

վածաբանական, եկեղեցական և հասարակական կյանքի արդիական հարցերի քննարկման նպատակով:

2001 թ. փետրվարի 13-15-ը Սուրբ Էջմիածնում կայացած առաջին հանդիպումը նվիրված է եղել ժամանակակից հասարակական նշանակություն ունեցող խնդիրների քննարկմանը, որոնք արտացոլված են Ռուս ուղղափառ

եկեղեցու սոցիալական հայեցակետի սկզբունքներում: Ներկայացվեցին 4 զեկույցներ հետևյալ թեմաներով՝ «Մարդու իրավունքները քրիստոնեության տեսանկյունից», «Կրթությունը քրիստոնեության մարտահրավերներ»

(զեկույցով՝ Հովակիմ վարդապետ Մանուկյան), «Աստվածաբանական մոտեցումը մարդու իրավունքների հարցերին» (զեկույցով՝ քահանա Գեորգի Ռյաչին), «Մարդու իրավունքները. աստվածաբանություն, գաղափարախոսություն, թե՛ քաղաքական տեխնոլոգիա» (վանահայր Կիրիլ (Գովառուն)), «Վայոյքը դեպի վեր» (Սրա Գալոյան):

Այնուհետև ծավալվեց քննարկում, արժարվեցին մարդու իրավունքների սկզբնավորման թեման, դրա կապը քրիստոնեական ավանդույթի և այլ աշխարհայացքային համակարգերի հետ, եկեղեցի-պետություն հարաբերության մոդելներ, ժամանակակից հասարակության մեջ եկեղեցու առաքելության հարցեր:

Կողմերը եկան հետևյալ եզրահանգումներին: Եկեղեցու հետաքրքրությունը մարդու



իրավունքների նկատմամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդը և նրա փրկությունը քրիստոնեական ավետումի կենտրոնում են: Հետևաբար՝ մարդու իրավունքները, արժանապատվությունը և մարդկային անհատականության պաշտպանությունը արժեքավորվում են նաև քրիստոնեական ավանդույթների տեսանկյունից: Դա հաստատվեց հոգեհարազատ և հավասարեցնող մի ամբողջ դարաշրջան ապրած Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական եկեղեցիների:

→ էջ 6

### ← էջ 1 ՀՊԴԱԾ 8

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրավաբան ազգային դատարանների միջոցով արդյունավետ կերպով պաշտպանելու ասիանադրությամբ կամ օրենքով անդադրված իր հիմնական իրավունքները դրանք խախտումների յուրաքանչյուր դեպքում:

ՀՊԴԱԾ 9  
Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական կալանքի, ծեղրակալման կամ արտաքսման:

ՀՊԴԱԾ 10  
Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիման վրա իրավունք ունի պահանջել, որ իր գործը իրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջներին պահպանմամբ քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

ՀՊԴԱԾ 11  
1. Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անտեղ հրաժարվել միջև այն պահի, քանի դեռ նա մտքով օրհնագործություն չի հաստատվել իրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները:

2. Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղադրվել որևէ արագ կատարելու կամ անգործության համար, որը կատարվելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև ավելի ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ:

ՀՊԴԱԾ 12  
Ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական և ընտանեկան կյանքում կամայական միջամտության կամ, իր նախնիներին կամ անգործության համար, որը կատարվելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև ավելի ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ:

ՀՊԴԱԾ 13  
1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու ցանկացած պետության սահմաններում:

2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքել ցանկացած երկիր՝ ներառյալ իր սեփականը, և վերադառնալ իր երկիրը:

ՀՊԴԱԾ 14  
1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի հետամղվել սպասարան դրոմեղ այլ երկրներում և օգուտվել այդ սպասարանից:

2. Սյր իրավունք չի կարող կիրառվել եթե հետապնդում իրավաբան պայմանավորված է ոչ քաղաքական հանցագործություն կամ Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքներ կատարելով:

### ՀՊԴԱԾ 15

1. Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

ՀՊԴԱԾ 16  
1. Չափահաս դարձած տղամարդիկ ու կանայք իրավունք ունեն առանց ռասայական, ազգային ու կրոնական պատկանելության հատկանիշների որևէ սահմանափակման ամուսնանալ և ընտանիք կազմել: Նրանք օգտվում են նույն իրավունքներից ամուսնանալու պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում:

2. Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող երկու կողմերի ազատ ու փակատար համաձայնության դեպքում:

3. Ընտանիքը համարվում է հասարակության բնական ու հիմնական շրջը և հասարակության ու պետության կողմից պաշտպանության իրավունք ունի:

ՀՊԴԱԾ 17  
1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի կայք ունենալ ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ:

2. Ոչ ոք կամայականորեն չպետք է զրկվի իր ունեցվածքից:

ՀՊԴԱԾ 18  
Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու հավատի ազատության իրավունք, այդ իրավունքը ներառում է իր կրոնը կամ հանդուժմունքը փոխելու ազատությունը, իր հավատը և հանդուժմունքը ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ մեկտեղ դավանելու, իրապարակալ կամ մասնավոր կարգով ուսմունք քարոզելու, ծիսակատարություն, կրոնական պաշտամունք և արարողություններ կատարելու ազատությունը:

ՀՊԴԱԾ 19  
Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշխմբ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավասարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:

ՀՊԴԱԾ 20  
1. Յուրաքանչյուր ոք խաղաղ հավաքների ու միությունների ազատության իրավունք ունի:

2. Ոչ ոք չի կարող պարտադրվել պատկանելու որևէ միության:

ՀՊԴԱԾ 21  
1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցել իր երկրի կառավարմանը:

2. Յուրաքանչյուր ոք իր երկրում ունի պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք:

3. Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը:

Մյր կամքն իր արտահայտությունը պիտի գտնի պարբերական և չկեղծված ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն հանրապետական կարգով:

ՀՊԴԱԾ 22  
Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, իրավունք ունի սոցիալական ապահովության և տնտեսական, սոցիալական ու մշակութային բնագավառներում իր արժանապատվությունը պահպանելու և իր անձին ազատ զարգացման համար անհրաժեշտ իրավունքներ իրագործելու ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով՝ յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան:

ՀՊԴԱԾ 23  
1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի պարտ ու բարենպաստ պայմաններ և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, առանց որևէ խտրականության, ունի հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության իրավունք:

3. Յուրաքանչյուր աշխատող ունի արդար ու գոհացուցիչ վարձատրության իրավունք, որը կապահովի արժանավայել բարեկեցություն իր և իր ընտանիքի համար և, անհրաժեշտ դեպքում, կրթական սոցիալական ապահովության այլ միջոցներով:

4. Յուրաքանչյուր ոք ունի արհեստակցական միություններ ստեղծելու և իր շահերը պաշտպանելու համար արհեստակցական միություններ ընդունվելու իրավունք:

ՀՊԴԱԾ 24  
Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանակի իրավունք՝ ներառյալ աշխատանքային օրվա խելամիտ սահմանափակումն ու պարբերական վճարովի արձակուրդները:

ՀՊԴԱԾ 25  
1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի՝ ներառյալ սնունդ, հագուստ, բնակարան, բժշկական խնամք և սոցիալական անհրաժեշտ սպասարկում, որն անհրաժեշտ է իր խնամքի և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդանության, այրիանալու, վերահաս ծերության կամ իր կյանքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում ապահովված լինելու իրավունք:

2. Մարդությունն ու մանկությունը տալիս են առանձնահատուկ հոգածության և օգուտն ունենալու իրավունք: Ամուսնությունից կամ արտամուսնական կյանքից ծնված բոլոր երեխաները պետք է օգուտն սոցիալական միանման պաշտպանությունից:

ՀՊԴԱԾ 26  
1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Անվճար տարրական և ընդհանուր կրթությունը պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պիտի լինի պարտադիր:

չունենում, որոնք պետք է անցկացվեն հանրապետական և հավասար ընտրական իրավունքի պայմաններում, փակ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարեց ձևերի միջոցով:

ՀՊԴԱԾ 27  
Յուրաքանչյուր ոք՝ որպես հասարակության անդամ, իրավունք ունի սոցիալական ապահովության և տնտեսական, սոցիալական ու մշակութային բնագավառներում իր արժանապատվությունը պահպանելու և իր անձին ազատ զարգացման համար անհրաժեշտ իրավունքներ իրագործելու ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով՝ յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան:

ՀՊԴԱԾ 28  
1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի պարտ ու բարենպաստ պայմաններ և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, առանց որևէ խտրականության, ունի հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության իրավունք:

3. Յուրաքանչյուր աշխատող ունի արդար ու գոհացուցիչ վարձատրության իրավունք, որը կապահովի արժանավայել բարեկեցություն իր և իր ընտանիքի համար և, անհրաժեշտ դեպքում, կրթական սոցիալական ապահովության այլ միջոցներով:

4. Յուրաքանչյուր ոք ունի արհեստակցական միություններ ստեղծելու և իր շահերը պաշտպանելու համար արհեստակցական միություններ ընդունվելու իրավունք:

ՀՊԴԱԾ 29  
Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանակի իրավունք՝ ներառյալ աշխատանքային օրվա խելամիտ սահմանափակումն ու պարբերական վճարովի արձակուրդները:

ՀՊԴԱԾ 30  
1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի՝ ներառյալ սնունդ, հագուստ, բնակարան, բժշկական խնամք և սոցիալական անհրաժեշտ սպասարկում, որն անհրաժեշտ է իր խնամքի և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդանության, այրիանալու, վերահաս ծերության կամ իր կյանքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում ապահովված լինելու իրավունք:

